

անկողնի մէջ ընկած հառաջում էին. իսկ վախսանածներին փառքով և պատուով հասցնում էր ի հոլ գերեզմանի ինքնին անձամբ, նախընթաց լինելով յուղարկաւորաց այն ժամանակ, երբ մարդ չէր կարողանում իւր կարեաց համար տանից դուրս գալ և եղքայր եղքօրից չեռանում էր երկիւղից, բայց յիշեալ Հայրիկին իրրե քաջ զինաւոր Հայկական սուրբ եկեղեցւոյ մի խումբ երիտասարդ իւր յիշնից պատրաստած, հասնում էր օգնում էր ամենեցուն առհասարակ, որերն կարուտում էին որ և իցի օժանդակութեան:

Քանիցս անգամ է արտասուալի աչքերով քարողել ժողովրդեան նոյն իսկ բեմի վրայից այս մահտարաժամ հիւանդութեան մասին, Քանիցս անգամ խրախուսելով ժողովրդեան "Լաւ է յուսալ ի Տէր, քան յուսալ ի բժիշկս" դուրս է եկել ի թափոր, ուր ի ծաւնկս անկեալ աղօթել է ի Տէր, որ նա կրկին ընդունի Բագրուայ տիրասիրտ ժողովրդին իրա քաղցր ինսամատարութեան ներքոյ, թողլով նոցա մեղքերը:

Այսպիսի գործունէութիւնքն աչքի առաջ ունենալով, միթէ պիտի զլանսց մեր Բագուայ Հայկական ժողովուրդը թողնելու նորա այս սիրազործութիւնքն առանց մասզրութեան: Ամենեն ոչ ։ Սակայն ես յուսով եմ, որ զոնէ մի օր կմտաբերեն Բագուայ Հայերը այս առաքինի գործքերը և կապարաստուին խորին շնորհակալութիւն մատուցանելու մեր իմաստուն արժ. Հօր—Թագէոս աւագ Քահանայի Բուգաղեանց ցանկալով և բարեմաղթելով նորան այսպէս ազնիւ գործքերով շատ տարիներ մեր ազի և նորա սուրբ եկեղեցւոյ լուսաւորութեան և պարծանաց համար:

Ինչպէս լսեցի մի քանի պարոններից, նոյն արժ. Հայրը կիւրակէ օրը (Սեպ. 5ին) շնորհակալութեան հանդէս պիտի կատարի Աստուծոյ, որ նա կրկին սիրով ընդունեց Բագուայ ժողովրդին իրա բազուկների և խնամատարութեան տակ, անհետացնելով միանդամայն նորանից (ժողովրդից) տկարութեան աշուելի և քստմելի նշաններն:

Ուրեմն Առարտական Շնիւրութեան  
Ա-սդ Գ-է-է-րէ-թէ-անց

ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑ ՀԱՅՈՑ ԱԽԱԼՑԻՈՑ,

(Վասագրոյս թերթից անձկութեան պատճառաւ՝ ինչպէս այլնամականիքը նոյնպէս հետեւեալը չկարողանալով պարունակել անցեալ (Դ.) թուոյն մէջ՝ ի ներկայիս կը հրատարակեմք հանդերձ երկոքումբք Ճառօք):

Խ-է-տ-է-ր-ն-է-ան Ե-ր-ա-ր-ա-ր Ա-հ-ա-դ-ր-ո-յ :

Մի ժողովրդի հետ ծանօթանալու համար ըսկիզբը դիմումնեք նորա թէ ընտանեկան և թէ հասարակական սովորութիւններին կամ հանդէսներին. ուրեմն որևիցէ ազգային հանդէս չի մերժեր Խմբազրութիւնդ իւր թերթերի մէջ տպազրել ի լուր ամենեցունց:

Ամսոյս Կին կատարուեցաւ Եղիսաբէթեան օր. ուսումնարանի կառուցման հանդէսը նոյն օրը առաւտեան ժամը 10ին ուսումնարանի Պատուելի Հոգաբարձուք 15 հատ աղջիկներ աղքատ ընտանիքներից ձրի աշակերտ ընտրելից յետոյ ժողովուեցան նոյն ուսում. դահիճում աշակերտուհեաց և ուսուցչաց հետ, սպասելով ժամերգութեան ըսկուելու, Նկեղեցւոյ զանգակահարութիւնից զինի բոլոր աշակերտուհիք կարգաւ մի վարժապիտի առաջնորդութեամբ Հոգաբարձուաց և ուսուցչաց հետ կանոնաւոր ձևով եկան եկեղեցի և կանանց դասի առաջ արանց մէջ զցդ զցդ զցդ շարուեցան. Այսպիսի հանդէս առաջին անգամ լինելով այստեղ թէ արանց և թէ կանանց խումբեր դիմում էին եկեղեցի: Ամանք դիմումէին այլոց հետևելով ոմանք միայն այս տեսարանով զուարձանալու և ոմանք ճանաչելով այս զործի վսեմութիւնը իւրեանց մարդկութեան պարտքը վճարելու նպատակաւ: Աշակերտուհիներից քանի մը զմայլելով այս տեսարանաւ, իւրեանց շրթումների վերայ արտայայտումէին մանկական քաղցր ժպիտներ. միւսների այստերի վերայ ցոլումէին ամօթխածութեան և պարկեշտութեան նշաններ, և այլք ցնծումէին տեսնելով այս հանդէսը, որ իւրեանց ուսման և դաստիարակութեան համար է: Ժամերգութիւնից

յետոյ նոյն կարգաւ վերագարձան ուսումնարան և ապա հոգևորականաց դասը վայիլուչ կերպով և փառաւոր հանդիսիւ ու պատշաճաւոր երգեցողութեամբ դիմեց նոյն տեղը հանգերձ ժողովրդական բազմութեամբ Այն տեղ խաչլուայ անելից յետ երբ այս օր հնուած ջուրը սրսկվումքը ժողովրդականաց և ուսումնարանի պատերի վերայ, այն ինչ միւս կողմը ներկայացնում էր մարդոյ աչքի առաջ տեսարան մի: Դահլիճի մէջ տեղը բռնած էր հոգևորական դասը իւր գոյն զգըն զգեստներով և փայլուն եկեղեցական զարդերով ձախ կողմը կանգնած էին կանայք իւրեանց ասիական շորերով, զեռահաստակ կանայք ծածկուածէին իւրեանց սպիտակ և նաշխերով զարդարուած էջրամաներով, որոց միայն երեսներն փոքր ինչ երեսում էին և ոմանց ուսները ևս, որոնք հազել էին կիսակոշիկներ ի ցցց մարդկան. իսկ պառաւ կանայք ծածկուածէին իւրեանց կապոյտ ու սպիտակ էջրամաներով: Աջակողմը կանգնած էին մեր եւրոպական և Արաստանի զգեստներով զարդարուած տիկնայք, որոց երեսների վերայ ևս նշմարվումէին ծիծաղ և հենգինական ծաղը առ միւսները որոնք երկնչելով և աչիւ կնայէին այս հանդէսին: Աջակողմեան և ձախակողմեան կանանց մէջ տեղը առանց էջրամի և շալերի կանգնած էին ուսումնարանի սաները, որոնց ձեռքերի վառած մոմերը նոյնպէս ծաղիկները աւելի փայլունութիւն և զեղեցկութիւն էին տալի նոցա զցն զցն եւրոպական և ասիական շորերի հետ այս տեսարանին. իսկ սոցագէմ ու գէմ էին աստիճաննաւորք, իշխաններ և թէ հասարակ ժողովուրդ:

Դեր. Փոխանորդի այս աւուր պատարագիւ լինելը աւելի գեղեցկութիւն և վսեմութիւն տուեց հանդէսին: Նախ՝ Դեր. Հայրը պատուական տեսնարանութիւն արաւ և յետոյ աշակերտուհի Թ. Մամիկոնեանցը իւր ընկերակիցների կողմից կարդաց ճառ: Ռուաճին անդամն է, որ մեր քաղաքում օրիորդը ճակատը բաց ու սիրտառած այսքան բազմութեան առաջ համարձակուեցաւ չը ծածկելիւր սրտի ուրախութիւնը և նոյնպէս թարգման լինել իւր դասակիցների կողմից: Յետոյ կարդացուեցան երկու ճառ ևս. մինը կարդաց Պ. Յ. Գեղամեանը և միւսը ևս, որոց պատճենները այս նկարագրու-

թեանս հետ ուղարկելով խնդրումեմ ի տիպ արձանացնել, եթէ արժան կը դատէ Աղգաշահ Խըմբագրութիւնդ:

### ԳՐԱՐԿԵԴԻՆ ԴԱԿԱԳԵԱՆՑ

ՏԻ ՅԱՆԱԿԵ

ՅԱԼԵՎԵՐԵՐ:

### ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Ի ՀԻՆ ԽՐԻՍ

### ԽՄԵՐԱԳՐԻ ԸՆԿԱԿԵՐ:

Հին Խրիմու մերազնէից ժողովրդական Դպրոցն որ թէ և ի սկզբանէ անդ բնակութեան Հայոց կար և կշարունակուեր, բայց ըստ օրինակի ազգային միւս Դպրոցաց շատ հոգեմաշ զժուարութեամբ զանազան շրջաններ ունեցել է. վասն որոյ Դըպրոցին զյութիւնը խանգարեալ վիճակու խորին լուսաւեան մէջ մնացած էր մինչև ցայժմ: վասն զի ի բացմանէ անդ Դպրոցին մինչի 1868 ամին օժանդակութեամբ առաջանաւոր առաջանաւոր և մասնակցութեամբ ուսնանց ժողովրդականաց քաղաքիս կառավարէր Հոգեոր հարց քահանայից և տիրացուաց տեղւոյս տշխատութեամբն հին գաղափարաւ: Սակայն իննեւտասներորդ դարում մէջ քաղաքիս Հայազի փոքրիկ ժողովուրդը ևս արգէն բնականաբար ճանաչելով ուսման յարգն և մտածելով թէ ապագայից բարօրութեան անհրաժեշտ պայմանն է միայն ուսումն, որ մարդուս սրտին մէջ ճշմարիտ հայրենասիրութիւնը կարծարծէ, քաջալերացաւ և զիսաւորապէս փոյթ ունեցաւ տեղւոյս Դպրոցին վիճակն նորոգելու և բարեկարդ զրութեամբ պահելու, մանաւանդ յօրէ առաջնորդութեան ամենապատիւ Դարրիէլի սրբազն Եպիսկոպոսի Այշվագեանց, որ ոչ սակաւ եղէ Դպրոցիս կանոնաւոր ընթացից պատճառ: — Այս յատկացեալ պարտաւորութիւնքն ի գործ դնելու նպատակու ուրիշ աղբիւր չկարողացանք մտածել և զյացնել, բայց եթէ զիմել առ քաղցր ակնածութիւն գերապատիւ Եղիազար Արքեպիսկոպոսի, նախորդի այժմեան Առաջնորդի վիճակիս, որ մեծ համակրութեամի բարեհաճեցաւ ըստ իւրում ուսումնասէր և ազգա-